

Գ. ՍԵՎԱԿ

ՇԱՐԱՋՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ
ՄԱՐՔՍ-ԼԵՆԻՆՅԱՆ ԻՄԱՑԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԼՈՒՅՍԻ ՏԱԿ

Առաջնահատիկ Ն. Յա. Մառի անվան Լեզվի
Ինստիտուտի 1949 թ. «Աշխատությունների
ժողովածուի» հատոր IV-ից

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈՒԴԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1949



ՀԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ ՄԱՐԲՍ-ԼԵՆԻՆՅԱՆ
 ԻՄԱՅԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՏԱԿ¹

Եա հսկանմանության շրջանի խոշորագույն լեզվաբան Նիկողայոս Մառի լեզվի նոր ուսմունքի բազայի վրա, մարքս-լենինյան դիալեկտիկայի լույսի տակ Սովետական Միության մեջ, կենտրոնում ու առանձին ուսուցիչականերում, ձևավորվեց, աճեց և մեծ ուժ դարձավ սովետական լեզվաբանությունը: Հընթացս իր ստեղծագործական աշխատանքի նա այժմ վերջին գրոհն է մղում բուրժուական լեզվաբանության ժամանակավրեպ քուրմերի ու ուղեղիվների դեմ: Հնդեվրոպարանություն ու սովետական լեզվաբանության հաշտ գոյակցության մասին մեր երկրում խոսք լինել չի կարող: Իր դարն ապրած հնդեվրոպարանությունը մեզ համար արդեն անցյալ է, նրա բոլոր վերապրուկներն անողորմարար պիտի քննադատվեն, մերկացվեն և սովետական գիտությունից դուրս վտարվեն:

Հարյուրավոր լեզուներով բնակեցված, բազմատասնյակ լեզուների կուլտուրական վերելքով իրավամբ պարծեցող, տասնյակ նոր աղգային գրական լեզուների ձևավորմամբ, մինչև վերջին ժամանակներս անգիր ու անմշակ լեզուների համար ստեղծած քերականություններով ու բառարաններով, բազմաթիվ ժողովուրդների աղգային բանասիրության հուժկու վերելքով ու զարգացմամբ Սովետական Միությունը դարձել է ժամանակակից ամենաառաջավոր լեզվաբանության համաշխարհային հայրենիքը: Աշխարհի երեսին ոչ մի երկրում լեզվաբանությունը այնքան սերտորեն չի կապված հասարակական կյանքին ու մասնավորապես լեզվաշինարարության պրակտիկային, որքան մեր երկրում: Եվ այդ միանգամայն հասկանալի է. լեզվաբանությունն ու քերականությունը մարքսիզմ-լենինիզմի լույսի տակ, Ն. Մառի

¹ Զեկուցված է ՀՍՄԽ Գիտությունների Ակադեմիայի Ն. Մառի անվան լեզվի ինստիտուտի 1949 թվի հունվարյան սեսիայում:



լեզվի նոր ուսմունքի հիման վրա վերափոխվել են, հրաժարվել մետաֆիզիկայից ու սխոլաստիկայից, դարձել կենսական, ստեղծագործական դիսցիպլիններ, դարձել սովետական ժողովուրդների ազգային կուլտուրայի վերելքի հուժկու գործոն։ Սովետական լեզվաբաններին երջանիկ բախտ է վիճակված իրենց մասնագիտութ՛յան բնագավառում նպաստելու սոցիալիզմի հետագա դարդացմանը և այդ նպատակով նրանց պատվավոր դեր է հատկացված շատ բան հիմնովին փոխելու, շատ բան սկզբից սկսելու իրենց գիտութ՛յան մեջ, մինչև որ լեզվաբանութ՛յունն ու քերականութ՛յունը դառնան մարդկային լեզվի ու մտածողութ՛յան դիալեկտիկայի ուսմունք։



Լեզուն մարդկային հաղորդակցման կարևորագույն միջոցն է։ Լեզվի միջոցով է, որ հանրորեն կազմակերպված մարդիկ իրար հաղորդում են իրենց մտքերը, դպացմունքները, ծրագիրը, նպատակը և այլն, փոխադարձաբար իրար հասկանում և կազմակերպում իրենց աշխատանքային գործունեութ՛յունը։

Սակայն, լեզուն միայն հաղորդակցման միջոց չէ։ Չէ՛ որ որևէ միտք, ծրագիր, նպատակ ուրիշներին հաղորդելուց առաջ հարկավոր է, որ հաղորդողն ինքն ունենա այդ միտքը, ծրագիրը և այլն, որպեսզի հաղորդի, ուրիշների սեփականութ՛յուն դարձնի։

Սովորական խոսակցութ՛յունների ժամանակ հաճախ լսում ենք այսպիսի արտահայտութ՛յուններ. «Հապա իմացիր՝ ի՞նչ կա իմ մտքում», կամ՝ «Մտքումդ մի բան ունեն, առա պրծիր»։ Այսօրինակ արտահայտութ՛յունները միանգամայն ճիշտ կերպով ցույց են տալիս, որ մարդիկ հաղորդելուց առաջ իրենց մտքում մի բան են ունենում, որը կարող են հաղորդել, կարող են և չհաղորդել։ Մտքում եղած այդ բանը ոչ այլ ինչ է, քան մարդու մտածածը առարկաների և երևույթների մասին, կամ, ավելի ճիշտ՝ առարկայական աշխարհի մասին։ Հետևաբար լեզուն ոչ միայն հաղորդակման միջոց է, այլև՝ մտածելու միջոց, միտք կադապարելու միջոց։

Մարդիկ նչ միայն ասում, խոսում, պատմում և դրում են լեզվի միջոցով, այլև՝ մտածում են դարձյալ լեզվի միջոցով։ Մտածելը և խոսելը մարդու՝ հանրորեն կազմակերպված ամենա-

կատարյալ կենդանու միենույն գործողության տարրեր արտահայտություններն են՝ դիալեկտիկորեն իրար հակադիր, բայց և միասնական:

Եվ մտածելն ու խոսելը պատմականորեն էլ համեմատաբար նոր ժամանակներում են իրարից փեռելալի, տարրերով: Շատ հին ժամանակներում մարդիկ միայն բարձրաձայն էին մտածում: Դեռ այսօր էլ նույնիսկ զարգացած մարդիկ երբեմն մտածելու ժամանակ անդիտակցաբար շարժում են շրթունքները և մերթ րնդ մերթ բարձրաձայն արտասանում առանձին բառեր: Այդ պատահում է սովորաբար այնպիսի դեպքերում, երբ մարդ կանված է իր մտքի առարկայով և մտածում է շատ լարված (ինտենսիվ):

Մտածելու և խոսելու կարողությունը՝ լեզուն, ստեղծվել է մարդկային հասարակության մեջ լիարժեք մի բան ասելու կարիքից» (Ֆ. Էնգելս):

Լեզուն, ուրեմն, իրար մի բան ասելու կամ հաղորդակցման կարենքադույն միջոց է և միաժամանակ մտածելու՝ մտածողության ձևը:

Մարդը գտնվում է առարկայական աշխարհի ոլորտում: Մարդուն շրջապատող առարկայական աշխարհը, այդ թվում նաև ինքը մարդը, անընդհատ շարժման մեջ է, անընդհատ փոփոխվում է:

Դիալեկտիկան ուսուցանում է, որ «աշխարհը չի կազմված պատրաստի իրերից և ավարտուն առարկաներից, այլ հանդիսանում է պրոցեսների համակցություն, որոնց մեջ անփոփոխ թվացող առարկաները, ինչպես և դրանի միջոցով շինվող նրանց մտացի պատկերները՝ հասկացությունները գտնվում են անընդհատ փոփոխության մեջ, մերթ առաջանում են, մերթ ոչնչանում» (Ֆ. Էնգելս): Առարկաների և երևույթների բազմազանությամբ շրջապատված մարդը շփվում է բնության հետ, անդրադառնում նրանց, որպեսզի ճանաչի և օգտագործի՝ իր կյանքը վերարտադրելու նպատակով:

Բարձրաթույն օգագնացության միջոցով հաղորդակցությունը արագացնելու և դյուրացնելու համար մարդիկ ուսումնասիրում են անդրմթնոլորտը, օդի խտությունը, ջերմությունը և այլ հատկությունները նրա բարձր շերտերում, Արթիկի տուֆն օգտագործելու նպատակով ուսումնասիրում են նրա ֆիզիկական և քիմիական հատկությունները և այլն:

Բոլոր առարկաներին և երևույթներին մարդն անդրադառնում է իր մտածողության միջոցով, այդ առարկաներն ու երևույթներն իր մտածողության առարկա կամ նյութ դարձնելու միջոցով: Մտածել բառն ինքը նշանակում է մի բան մտքի մեջ բերել, մտքի առարկա դարձնել (զմտաւ ածել):

Սակայն մարդու մտածողությունը ի վիճակի չէ միաժամանակ զբաղվելու բոլոր առարկաներով ու երևույթներով, մի անգամում իր մտքի առարկա դարձնելու: Բոլոր երևույթներն ու առարկաները: Չէ որ մարդու տեսողությունն էլ սահմանափակված է և ի վիճակի չէ միաժամանակ ընդգրկելու այն բոլորը, ինչ որ շրջապատում է մարդուն: Ոչ մի մարդ էլ կարող միաժամանակ, մի անգամում տեսնել իր չորս կողմում եղած առարկաները: Տեսողության այս սահմանափակումը, սակայն, չի խանգարում, որ մարդն այնուամենայնիվ կարողանա տեսնել իր չորս կողմը. նա հնարավորություն ունի առանձին-առանձին տեսնելու այն, ինչ որ գտնվում է առաջը, ետևը, աջ կողմն ու ձախ կողմը և այսպիսով, վերջին հաշվով, տեսնելու իր չորս կողմը: Նույն ձևով էլ մտածողության սահմանափակումը չի խանգարում, որ մարդն իր մտածողության առարկա դարձնի բոլոր այն առարկաներն ու երևույթները, որ հետաքրքրում են նրան. կենտրոնանալով մերթ մի առարկայի, մերթ այլ առարկայի վրա՝ մարդկային մտածողությունը, վերջին հաշվով, կարողանում է ընդգրկել բոլոր առարկաները, թեպետ ոչ միաժամանակ: Մարդկային մտածողությունը առարկայական բարդ աշխարհն ընդհանուր կերպով ընդգրկելուց հետո վերլուծում է համեմատաբար պարզ առարկաների ու երևույթների, կենտրոնանում նրանց յուրաքանչյուրի վրա առանձին-առանձին և ապա նորից կատարում համադրություն:

Մարդկային մտածողությունն այս ձևով ի վիճակի է ընդգրկելու ամեն ինչ՝ առարկայական ամբողջ աշխարհը, սակայն յուրաքանչյուր անգամ՝ միայն մեկ առարկա, մեկ երևույթ: Օրինակ՝ «Ինչպե՞ս տոնեցինք Մայիսի մեկը», «Ի՞նչ է հանքը», «Ինչպե՞ս հաղթանակեց Հոկտեմբերյան ռևոլուցիան» և այլ հարցերից յուրաքանչյուրի մասին կարելի է մտածել, այդ հարցերի նյութը կարելի է մտածողության առարկա դարձնել միայն առանձին-առանձին, մեկը մյուսից հետո, բայց ոչ երբեք խառնիխուռն և միաժամանակ:

Յուրաքանչյուր նյութի մասին մտածելու ժամանակ մենք մեր ուշքն ուղղում ենք նրա վրա, վերաբրտադրում այն բոլոր

մտքերը, որ այս կամ այն չափով կապ ունեն նրա հետ՝ մի կողմ թողնելով կամ առժամանակ մոռանալով այն ամենը, ինչ որ կապ չունի նրա հետ: Այդ ձևով մեկ նյութի կամ մեկ հարցի շուրջը մենք կազմում ենք մտքերի մի շարան, որը հանդիսանում է մի սպառիչ ամբողջություն, և ապա անցնում ենք մի այլ նյութի կամ հարցի, ըստ անհրաժեշտության: Մտածողությունը մի նյութից մի այլ նյութի փոխանցելը սովորաբար ունենում է ներքին և արտաքին բաղմազան պատճառներ: Երբ, օրինակ՝ Պոռշյանի մասին դաս պատասխանող աշակերտին հարցնում են Տերյանի մասին, նա իսկույն յուր մտածողությունը փոխանցում է այս նոր հարցին և մի կողմ թողնելով ու առժամանակ մոռացության տալով Պոռշյանի հետ կապված մտքերը՝ յուր հիշողությունից վեր է հանում Տերյանի հետ կապված մտքերը, միահյուսում իրար ու պատասխանում: Պարզ է, որ թվարանության ուսուցչի համապատասխան հարցի կապակցությամբ նա իսկույն այլ մտքեր է վեր հանում յուր հիշողությունից: Երբեք չդադարող մարդկային մտածողությունը տրոհվում, բաժանվում է առանձին օղակների, հատվածների, որոնցից յուրաքանչյուրն ընդգրկում է մի տարրեր առարկա, տարրեր նյութ:

Մտածողության այն հատվածը կամ օղակը, որ միահյուսում է այն բոլորը, ինչ որ մենք մտածում ենք մի առարկայի կամ նյութի մասին մի անդամում, կոչվում է մտածուքյուն:

Մարդկային մտածողությունն, ուրեմն, անընդհատ վերածվում է մտածությունների, նա մտածությունների անվերջ շարան է: Մտածող մարդն էլ մի մտածությունից անընդհատ անցնում է մի այլ մտածության՝ նայած հանգամանքին, տեղին, նպատակին և այլն:

Լեզուն, ինչպես պարզվեց վերևում, բավարարում է «իրար մի բան ասելու» կամ հաղորդելու կենսական կարիքը: Մարդկանց մեջ այդ կարիքը չափազանց մեծ է, նրանք չեն կարող իրար մի բան չասել, քանի որ բաղմազան և անհամար կապերով (արտադրական, հասարակական, դասակարգային, ընտանեկան և այլն) կապված են իրար: Մարդն ամեն բոլե զգում է ուրիշին մի բան ասելու կամ նրանից մի բան իմանալու կարիքը (տանը, դպրոցում, զործարանում, ժողովում և այլն): Իսկ մարդիկ սովորաբար իրար հաղորդում են այն, ինչ որ մտածում են ու զգում այս կամ այն հարցի մասին: Հետևաբար մարդիկ իրար հաղորդում են իրենց մտածությունները:

Մտածությունը կարելի է հաղորդել երկու ձևով՝ կամ բանավոր և կամ գրավոր:

Բանավոր հաղորդած մտածությունը մատչելի է մոտիկ մարդկանց (թեև ռադիոյի միջոցով հաղորդվում է նաև հեռուները), կարճատև է, վայրկենական կյանք ունի (թեև գրամաֆոնի քաթակի կամ հնչուն կինոյի ժապավենի միջոցով կարող է երկար պահպանվել), մինչդեռ գրավոր հաղորդված մտածությունը (օրինակ՝ գիրքը) մատչելի է բոլոր ժամանակների և բոլոր այն մարդկանց համար, որոնք կարդալ գիտեն և կարող են ձեռք բերել այն: Բանավոր և գրավոր հաղորդած մտածությունը քերականության մեջ կոչվում է խոսք: Մինչդեռ մտածությունը մնում է մտածողի գլխում և չի հաղորդվում ուրիշին, խոսքը, ընդհանրապես, դուրս է բերում մտածությունը մտածողի գլխից և դարձնում ուրիշների սեփականություն:

Քանի որ խոսքն առվում կամ դրվում է այն նպատակով, որ մարդիկ լսեն կամ կարդան, ինքնին հասկանալի է, որ խոսքի նյութը և բովանդակությունը պետք է պայմանավորվեն նրա նպատակադրությամբ: Այսպես օրինակ՝ ծիծաղելի բան կստացվի, եթե աշակերտը ֆրանսիական ռեոլուցիայի մասին արված հարցին պատասխանելու փոխարեն պատմի, թե ինչպիսի կենդանիներ կան, կամ մաթեմատիկայի խնդիրը լուծելու փոխարեն հոլովի «գրիչ» բառը: Նույնչափ ծիծաղելի կլինի, եթե ատամնարույժի մոտ դնացած հիվանդը նրան իր ցավը նկարագրելու և ատամները ցույց տալու փոխարեն պատմի, թե ինչ բան է թրթուրավոր տրակտորը:

Խոսքը, որ արտահայտված կամ հաղորդված մտածություն է, կադմված է լինում առանձին մտքերից, որոնք միահյուսվում են իբար և կադմում մտքերի մի շարան: Նա կարող է լինել շատ ընդարձակ ու ծավալուն՝ պարունակելով մի նյութի հետ կապված բազմաթիվ մտքեր, բայց կարող է լինել նաև շատ ամփոփ՝ պարունակելով միայն մի քանի կամ, նույնիսկ, միայն մեկ միտք: Մի ընդարձակ վեպ և մի փոքրիկ ոտանավոր, մի ընդարձակ դասախոսություն և մի փոքրիկ հաղորդում հավասարապես գիտվում են իբրև ինքնուրույն անկախ խոսքեր: Հետևաբար խոսքը որոշվում է ոչ թե իր ծավալով ու բովանդակությամբ, այլ իր ավարտվածությամբ, այսինքն մտքերի այն

ամբողջականությամբ, որ հաղորդում է մեկը այս կամ այն նյութի առթիւ:

Յուրաքանչյուր խոսք ունենում է յուր առանցքը կամ թեման, որ խոսքի նյութն է, առարկան, և որի շուրջը հեղինակը հյուսում է իր մտքերի շարանը. խոսքի առանցքի շուրջը հյուսված մտքերը դասավորվում են որոշ հաջորդականությամբ և կադմում են մի ամբողջություն: Այդ է պատճառը, որ երբ խոսակու ժամանակ որեւէ ձևով խանգարում են, ասում ենք՝ «խոսքս մի կտրիր» կամ «մտքիս թելը մի կտրիր»:

Որպեսզի խոսքի ամբողջականությունը հասկանալի լինի, անհրաժեշտ է, որ նրա յուրաքանչյուր առանձին միտքը մյուսներից դասված ու ճիշտ արտահայտված լինի, և բոլոր միտքերը կապված, միահյուսված լինեն իրար՝ որոշ հաջորդականությամբ: Անկապ և վայրիվերո հաղորդված մտքերը խոսք չեն կադմի:

Գրավոր և բանավոր արտահայտված յուրաքանչյուր ամբողջ միտք քերականության մեջ կոչվում է նախադասություն:

Նախադասությունը խոսքի միավորն է, որովհետեւ խոսքը կադմվում է նախադասություններից: Ինչպես որ մտածությունը առանձին մտքերի միահյուսումն է մի առանցքի շուրջը, այնպես էլ նրա արտահայտությունը՝ խոսքը, առանձին նախադասությունների միահյուսումն է, որոնք արտահայտված մտքեր են:

Խոսքն արտահայտում է մտածություն, իսկ նախադասությունը՝ միտք: Խոսքի միավորը նախադասությունն է, իսկ մտածության միավորը՝ միտքը:

* * *

Նախադասությունը կենդանի խոսքի (թե գրավոր, թե բանավոր) բաղադրիչ տարրն է, նրա նվազագույն միավորը: Յուրաքանչյուր մտածություն, որ կադապարվում է մեր ուղեղում, յուրաքանչյուր խոսք, որ արտահայտվում է, անխուսափելիորեն կադմված է նախադասություններից: Նախադասությունը խոսքի ամենահասարակ, ամենասովորական ամենազանգվածակերպ, միլիոնավոր անգամ վերաբաղրվող այն իրողությունն է, որի մեջ՝ առաջնորդվելով Մարքսի «Կապիտալի» շարադրման մեթոդով, կարելի է (և պետք է), ինչպես ասում էր Լենինը, բացահայտել դիալեկտիկայի բոլոր տարրերի սաղմերը:

Ինչպես ապրանքների փոխանակությունը բուրժուական (ապրանքային) հասարակության ամենապարզ, սովորական, հիմնական, ամենազանգվածակերպ, միլիոնավոր անդամ պատահող հարաբերությունն է (լենին), այնպես էլ նախադասությունը մարդու լեզվամտածողական դործունեության, նրա և օրեկտիվ իրականության ամենապարզ, զանգվածակերպ և միլիարդավոր անդամ կրկնվող հարաբերությունն է, օրեկտիվ իրականության իմացման անընդհատ պրոցեսի նվազագույն օղակը, օրեկտիվի արտացոլման, ճանաչման տարրական միավորը: Յուրաքանչյուր նախադասություն անպայմանորեն արտացոլում է օրեկտիվ ռեալականությունը և այդ ռեալականության միայն մեկ կտորը, սրա միայն մեկ հատկանիշով: Եթե ընդհանուր կերպով բնորոշելու լինենք նախադասությունը կարող ենք ասել որ նա միշտ արտահայտում է որևէ մատերիա (առարկա) և նրա շարժումը, որ նա արտահայտում է մատերիայի և նրա շարժման, առարկայի ու նրա հատկանշի հակադրամիասնությունը: Այս հակադրությունները նախադասության մեջ հանդես են գալիս հանձին նրա ենթակայի ու ստորոգյալի, որոնք կազմում են նրա հիմնական բևեռները:

Յուրաքանչյուր ենթակա մի առարկա է, իր, երևույթ, որի մեկ հատկանիշն է ստորոգյալը, որը հակադրվում է նրան և նույնացվում: Պարզ է, որ յուրաքանչյուր իր, երևույթ միայն մեկ հատկանիշով չի սպառվում, սակայն, լեզվական մտածողությունը, որպես վերնաշենքային արտահայտություն, դադարաբախտության յուրահատուկ ձև, ունի այն առանձնահատկությունը, որ հնարավոր է դարձնում առարկայի, իրի, երևույթի բազմաթիվ ու բազմազան հատկանիշներից միայն մեկը նույնացնելով ամբողջին՝ իմանալ այդ իրը, երևույթը, առարկան: Երբ ասում ենք ժուլկան շուն է, վարդը կարմիր է, սա ծառի տերև է և այլն, մենք այս երեք նախադասության միջոցով երեք առարկայի (ժուլկա, վարդ, սա) նույնացնում ենք նրանց մեկական հատկանիշը (բազմաթիվներից մեկը) և այսպիսով խորացնում նրանց իմացումը մեր կողմից: «Պատահականն ու անհրաժեշտը, երևույթն ու էությունը արդեն կան այստեղ, — ասում է Լենինը, — որովհետև Իվանը մարդ է, ժուլկան շուն է, սա ծառի տերև է և այլն ասելիս՝ մենք մի կողմ եմք նետում մի շարք հատկանիշներ, որպես պատահական բան, մենք էականն անջատում ենք երևացողից ու հակադրում մեկը մյուսին...: Այստեղ

արդեն (ինչպես հանճարեղորեն նկատել է Հեգելը) կա դիալեկտիկա՝ առանձինը ե ընդհանուրը)»¹

Եվ իրոք, եթե զննենք վերևում բերված ամենապարզ, ամենահասարակ նախադասությունները, կտեսնենք, որ նրանց մեջ դրսևորվել է մարդկային լեզվամասձական գործունեության բարդ պրոցեսը, որ այդ հասարակ նախադասությունների միջոցով կատարված է դիալեկտիկական մի բարդ գործողություն, որը և կազմում է լեզվական մտածողության առանձնահատկությունը։ Վերցնենք առաջին նախադասությունը՝ Ժուլիան շուն է։ Այս նախադասության մեջ է-ի միջոցով նույնացվող երկու մասերը (Ժուլիա և շուն) անհավասար, ոչ նույնական մասեր են, որոնք սակայն, դիտվում են որպես նույնական։ Այստեղ Ժուլիա առարկայից դատված, հանված է, նրա բաղմամբիվ հատկանիշներից (մեծություն, դույն, կշիռ, ցեղ, բնավորություն, պատկանելություն, հասակ, սեռ և այլն և այլն) միայն մեկը (շուն լինելը), որպես էական ու անհրաժեշտ, հակադրված է նրան և նույնացված (հավասարեցված) նրա հետ։ Խոսքի միավոր հանդիսացող յուրաքանչյուր նախադասություն իրականության իմացման այս բարդ պրոցեսի բացահայտումն է։ Իրականությանը անսկիզբ ու անվախճան մատերիան է իր հարատև շարժման մեջ, իր բաղմազան ձևերով, որոնք հանդես են գալիս իրրե իր, առարկա, երևույթ և այլն՝ իրենց հատկանիշների ամբողջությամբ։

Իր հասարակական կյանքը վերարտադրող մարդը շրջապատված է իրերի, երևույթների բարդ ցանցով և իր գործունեության յուրաքանչյուր ակնթարթում ընկալում է այդ իրերն ու երևույթները, անդրադարձնում իր ուղեղում, սակայն իր գործունեության յուրաքանչյուր ակնթարթում միևնույն իրերին և երևույթներին նա մոտենում է որոշ դիրքից, որոշ նպատակով. այդ իրերի ու երևույթների մեջ կղած բաղմազան հատկանիշներից միայն մեկն է նրա համար կարևոր, էական, հիմնական հանդիսանում յուրաքանչյուր տվյալ ակնթարթում, և հենց այս կարևոր, էական, հիմնական հատկանիշն է, որ ամեն անգամ դատվում է առարկայից, հակադրվում նրան և նույնացվում նրա հետ, իրրե նրան հավասար և նույնական։ Յուրաքանչյուր նախադասության մեջ տվյալ կոնկրետ իրը, երևույթը դիտվում

¹ Վ. Ի. Լենին, «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» էջ 421—422։

է որպէս միայն տվյալ մեկ հատկանիշը կրող, որպէս հավասար միայն տվյալ հատկանիշին: Երբ ասում ենք, վարդը կարմիր է, վարդ առարկայի միայն մեկ հատկանիշը (կարմիր) զատում ենք այդ առարկայի հատկանիշների հավաքականությունից, մյուս հատկանիշներն անկարևոր, երկրորդական համարելով տվյալ դեպքերում՝ միայն այդ հատկանիշն ենք հակադրում վարդին և նույնացնում, հավասարեցնում նրան՝ կազմելով մի լեզվական հավասարում, որի մեջ, սակայն, հավասարման երկու անդամներն իրար անհավասար են: Այդ է պատճառը, որ լեզվական ոչ մի «հավասարում» (նախադասություն) չի կարելի շրջել առանց խախտելու այդ հավասարումը, մինչդեռ թվադիտական որևէ հավասարում կարելի է ազատորեն շրջել. $Ա + Բ = Գ - Դ$ հավասարումը ոչինչ չի կորցնի, եթե շրջենք $Գ - Դ = Ա + Բ$ ձևով, մինչդեռ վարդը կարմիր է նախադասությունը անհեթեթության կվերածվի, եթե շրջենք կարմիրը վարդ է ձևով: Անա լեզվական մտածողության առանձնահատկություններից մեկը, որով հատարելովում է իմացության այլ ձևերից (թվադիտություն, արվեստ և այլն):

Ինչո՞ւ է բացատրվում, սակայն, այն հանգամանքը, որ նախադասության միջոցով յուրաքանչյուր անգամ մեկ առարկայի միայն մեկ հատկանիշն է զատվում նրա հատկանիշներից և ստորոգծվում (նույնացվում, հավասարեցվում) նրան: Մրա պատճառը գտնվում է ոչ այլուր, քան մարդու հասարակական դոյի, գործունեության մեջ, մարդու՝ օրեկտիվ իրականությանը հարաբերելու իրողության մեջ, տվյալ յուրաքանչյուր դեպքում մարդու որոշ հարաբերման և վերաբերմունքի պատճառի մեջ: Մարդու աշխատանքային արտադրողական գործունեության ընթացքում, նրա շուրջը եղող երևույթների, առարկաների բարդ ցանցի մեջ ամեն անգամ միայն մեկ երևույթ է զրազեցնում նրան, դառնում նրա իմացման առարկան և այդ առարկայի միայն մեկ հատկանիշն է կարևոր ու էական հանդիսանում տվյալ գործունեության ընթացքում, որով և նա դառնում է տվյալ առարկայի ստորոգյալը:

Վերցնենք հետևյալ մի շարք նախադասությունները. Սուրենը հարվածային է, Սուրենը 30 տարեկան է, Սուրենը ընտանիքավոր է, Սուրենը պարզեատրվեց, Սուրենը առաջ քաշվեց, Սուրենը ձայն խնդրեց, Սուրենը ելույթ ունեցավ, Սուրենը զնաց հանգստի տուն և այլն: Ինքնին հասկանալի է, որ Սուրենը տըր-

ված է իր բաղմամբով հատկանիշների հավաքականության մեջ, և երբ մենք ասում ենք, օրինակ, Սուրենը 30 տարեկան է, նա չի դադարում հարվածային, ընտանիքավոր և այլն լինելուց, կամ երբ ասում ենք՝ Սուրենը ելույթ ունեցավ, նա չի դադարում ընտանիքավոր, հարվածային, 30 տարեկան և այլն լինելուց: Սակայն յուրաքանչյուր անգամ Սուրենի հատկանիշներից մեկն ենք հանում, շեշտում, ընդգծում իրրե էական, հիմնական, իսկ մյուսները, երկրորդական, երևույթական համարում՝ նայած նրան, թե երբ, ինչ կապակցությամբ, ինչ մոտեցումով ենք խոսում Սուրենի մասին: Պարզեացնելով ժամանակ, օրինակ՝ երկրորդական է դառնում Սուրենի ընտանիքավոր և այլն լինելը և հիմնական՝ նրա հարվածայնությունը, մինչդեռ պարտիական ժողովում, քվեարկելու իրավունքի կապակցությամբ, երկրորդական է դառնում նրա հարվածային, 30 տարեկան, ընտանիքավոր և այլն լինելը. այդ կապակցությամբ հիմնական հատկանիշը հանդիսանում է Սուրենի պարտիական լինելը: Այսպես է լինում միշտ և անվերջ. ամեն անգամ միայն մեկ հատկանիշն է հանդես գալիս որպես հիմնական, իսկ այլ բոլոր հատկանիշները մնում են երկրորդական կարևորության բնադավառում:

Այն հանգամանքը, որ յուրաքանչյուր նախադասության մեջ ենթակայի միայն մեկ հատկանիշն է դառնում նրանից, հակադրվում նրան և նույնացվում նրա հետ, բնավ չի նշանակում, թե տվյալ առարկան դադարում է իր բոլոր հատկանիշներն ունենալուց, թե նրա մյուս բոլոր հատկանիշներն ընդհանրապես անկարևոր են դառնում և առհասարակ նսեմանում: Այդ չի նշանակում նույնպես, թե լեզվական մտածողության տվյալ եղանակը միակողմանիորեն է ծանոթացնում մեզ առարկային: Բնավ ոչ: Ընդհակառակն, հենց մտածողության այս ձևի միջոցով է միայն, որ հնարավոր է դառնում բաղմակողմանիորեն իմանալ առարկան, երևույթը՝ նրա բաղմադանության մեջ դրսևորելով նրա մասնավորությունները և նրա մասնավորություններն իմանալով՝ հարստացնել նրա ընդհանրության իմացումը: Մի բոլոր պատկերացնենք, թե լեզվական մտածողությունը նման լիներ, օրինակ, թվագիտական մտածողությանը և պահանջեր ոչ թե լեզվական «հավաստում» (նախադասություն), այլ թվագիտական հավաստում: Այն ժամանակ մենք ստիպված կլինեինք շարունակ կրկնել՝ վարդը վարդ է, ժուլիան

Ժուշկա է, սա սա է, Սուրենը Սուրեն է և այլն: Ինքնին հասկանալի է, որ այս եղանակով հնարավոր չէր լինի իմանալ օրեկտիվ իրականությունը, նրա բաղձադանությունը, նրա առանձնությունները: Մինչդեռ երբ մենք նույնացնում ենք տարրեր և նույնիսկ հակադիր երևույթներ, առարկաներ, իրեր՝ մենք դրսևորում ենք «բարձրագույն» կաղձակերպված մատերիայի՝ ուղեղի» բարձրագույն դործունեությունը, այսինքն որոշում կամ սահմանում ենք տալիս նրանց, կատարում ենք մի վերացում, որը մեզ հնարավորություն է տալիս ավելի խոր, ավելի ճիշտ իմանալու օրեկտիվ ռեալականությունը: Յուրաքանչյուր նախադասություն անսլայմանորեն սրե է առարկայի որոշում կամ սահմանում է տալիս: Իսկ ի՞նչ է նշանակում որոշում տալ. — «այդ նշանակում է տվյալ հասկացությունը հանդեցնել մի ուրիշ՝ ավելի ընդհանուր հասկացության» (Լենին): Այն ընդհանուր հասկացությունը, որին հանդեցնում ենք ենթական, նրա ստորոգյալն է:

Այսպիսով նախադասությունը ենթականի ու ստորոգյալի հակադրությունների միասնություն է, որն արտահայտում է առարկայի ու նրա հատկանշի (վարդը կարմիր է), մասնավորի և ընդհանուրի (Ժուշկան շուն է) կամ, ընդհանուր ձևով ասած՝ մատերիայի և նրա շարժման միասնությունը: Այս է նախադասության միակ ճիշտ գիտական և ընդունելի հասկացությունը, որը պետք է ընկնի և նոր քերականության հիմքում:

Այս տեսակետից միանգամայն անընդունելի է ֆորմալիստական քերականական սխտեմը, որի համաձայն ենթական (իրը, առարկան, երևույթը՝ մատերիան) համարվում է բայի, ստորոգյալի (հատկանշի, շարժման) լրացումը: Ենթական՝ հատկանիշը կրողը՝ շարժման տերը համարել հատկանշի կամ շարժման լրացում, նշանակում է չհասկանալ նախադասության էությունը, նրա մեխը, չընդունել, որ նախադասությունը մատերիայի և նրա շարժման լեզվակառուցված արտացոլման միավորն է: ՄՈՒՐԵՆԸ ՀԱՐՎԱԾ ԱՅԻՆ է նախադասության մեջ Սուրենը համարել ստորոգյալի լրացում միայն նրա համար, որ ստորոգյալի մեջ արդեն կա եզակի երրորդ դեմքի դադափարը, նշանակում է ընկնել դտագույն ֆորմալիզմի մեջ և չկարողանալ դուրս գալ նրանից: Ենթական նախադասության մեջ կա, և կա ոչ թե իբրև լրացում, այլ իբրև հիմնական գլխավոր անդամ, որովհետև նա կա իրականության մեջ, բնության մեջ իբրև ենթակա, իբրև

սուրեկտ և այդպէս էլ արտացոլւում է լեզվի մեջ: Այն հանդա-
մանքը, որ հայերենում և մի շարք այլ լեզուներում ստորոգյալն
արտահայտում է ենթակայի դեմքն ու թիվը, բնավ չի ենթա-
դրում ենթակայի բացակայութիւնը, և եթե հաճախ հայերենում
նախադասութիւնները հասկանալի են լինում առանց ենթա-
կայի, այդ բացատրւում է նրանով, որ ենթական տրված է լի-
նում նախօրոք:

Վ. Ի. Լենինը քննադատելով Օսովալդի հասարակ այն
սոփիզմը, թե «Միթէ բնութիւնը պարտավոր է բաղկանալ են-
թակայից և ստորոգյալից»,—ասել է. «Միթէ մեր դատողու-
թիւնները,—կարելի է՞ր պատասխանել Օսովալդին,—պարտավոր
են բաղկանալ էլեկտրոններից և եթերից: Իրոք, մատերիան,
որպէս «ենթակա», «բնութիւնից» մտքով վտարելը նշանակում
է միտքը որպէս «ենթակա» (այսինքն որպէս առաջնային, ելա-
կետային, մատերիայից անկախ ինչ որ բան) ընդունել փիլիսո-
փայութեան մեջ: Ենթական չէ, որ վտարւում է, այլ զգայութեան
օրեկտիվ ազդեցութիւնը (այսինքն՝ երեւոյթը, իրը—Գ. Ս.), և «են-
թակա» դառնում է զգայութեանը, այսինքն՝ փիլիսոփայութիւնը
դառնում է բերկրական»...¹

Այս մեջբերումից պարզ երևում է, որ Լենինի (մարքսիզ-
մի) համար մեր դատողութիւնները—«բաղկացած են էլեկտրոն-
ներից և եթերից, ենթակայից և ստորոգյալից» այն պատճառով,
որ բնութիւնն է բաղկացած նրանցից և նրանք արտացոլւում են
մեր գլխի մեջ: Ինքնին հասկանալի է, որ ենթակայի և ստորո-
գյալի դերի սրոշումը նախադասութեան մեջ կապված է իմացա-
բանութեան հետ և միակ ճիշտ լուծումը կարող է ստանալ դիա-
լեկտիկական մատերիալիզմի բանալիով:

* * *

Մենք գտնում ենք, որ ենթակայի դեմքի արտահայտու-
թիւնը ստորոգյալի մեջ դեռևս ենթակայի արտահայտութիւն
չէ. այդ վերաբերում է ոչ միայն 3-րդ, այլև 1-ին և 2-րդ դեմ-
քերին: Այս տեսակետից չենք կարող համաձայնել ալ. Մեշա-
նինովի այն կարծիքին, թե «նաև ուստաց լեզվում, նրա դեմ-
քային խոնարհման մեջ ИД-У, ИД-ЕЩЬ, ИД-ЕТ բայերը անհավա-
սարարժեք են սուրեկտի իրենց դրսևորմամբ: Առաջին երկու

¹ Վ. Ի. Լենին, «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» էջ 309:



դեմքերի մեջ նա պարզ է, իսկ երրորդ դեմքի մեջ կարող է պարզ չլինել... համեմատիր մի կողմից՝ отец идет?—да, идет, որտեղ երկրորդ նախադասության սուբեկտը հուշվում է առաջինի կոնտեքստով, և մյուս կողմից՝ այնպիսի նախադասություններ, ինչպես՝ человек идет, королева идет, дождь идет և այլն, որոնցում ստորոգյալը ինքնին անբավարար է կոնկրետացված սուբեկտի դրսևորման մեջ»¹

Այստեղ անտեսված է երեք կարևոր հանգամանք, առաջին հանգամանքն այն է, որ 1-ին և 2-րդ դեմքերը, իրեն բայի դեմք, բնավ էլ ավելի պարզ չեն, քան 3-րդ դեմքը, որովհետև, երբ կարդում ենք առանձին վերցրած «էնքան մնացի՝ աչքս ջուր դառավ» և «մնում էր յարին, ու չեկավ նա տես» նախադասությունները, զգում ենք, որ թե 1-ին դեմքի (էնքան մնացի), թե 3-րդ դեմքի (մնում էր յարին) դրսևորումները հավասարապես անբավարար են արտահայտում ենթական, եթե մենք ծանոթ չենք «Անուշ» պոեմի բովանդակությանը և չգիտենք, թե այդ նախադասությունները Անուշինն են և ասված են իր և ուռենու մասին: Միթե, օրինակ, որեւէ մեկը կարող է պատասխանել, թե ով են 1-ին և 2-րդ դեմքով արտահայտված հեռեկալ նախադասությունների ենթական, սուբեկտը, թեկուզ և վերջինս դրսևորված լինի ես և դու դերանուններով. «Ես այդ գիրքը կարդացի, որովհետև դու էիր գրել»: Պարզ է, որ կոնտեքստին, իրադրությանը ծանոթ չլինելու դեպքում 1-ին և 2-րդ դեմքով արտահայտված այս նախադասությունների սուբեկտները նույնքան անհավասարաբեք են դրսևորված, որքան և 3-րդ դեմքով արտահայտված «այս գիրքը նա է գրել» նախադասության մեջ:

Այստեղից հետևում է, որ բայի դեմքը կամ նույնիսկ դերանուն-ենթական դեռևս հավասարաբեք չեն սուբեկտի դրսևորմանը, որի կոնկրետությունը պայմանավորվում է միայն կոնտեքստով ու իրադրությամբ:

Այստեղ թյուրիմացությունն այն է, որ ենթադրվում է, թե ես-ը կամ դու-ն ավելի կոնկրետ են, քան նա-ն: Հիշենք, որ դեռևս լենինն է հանճարեղորեն նկատել. «Ի՞նչ է ես-ը. բոլոր մարդիկ ես են»:

Երկրորդ հանգամանքն այն է, որ սուբեկտի (ենթականի) հարցը քննվում է մեկուսացած, անկախ տոնված նախադասու-

¹ И. И. Мещанинов, — Члены предложения и части речи, էջ 172:

թյունների մեջ, մանավանդ ենթակայի բնական զեղջման հնարավորության անտեսումով, մինչդեռ կոնտեքստի մեջ, ենթական իմացարանական հավասարաբեք դրսևորում ունի ոչ միայն այն դեպքերում, երբ բայը արտահայտում է ենթակայի դեմքը, այլև՝ օրինակ ուսաց լեզվին հատուկ այնպիսի դեպքերում, երբ բայ-ստորոգյալը բնավ չի արտահայտում ենթակայի կամ դեմքը, կամ սեռը. օրինակ՝

„Молод еще, заносчив“, „Коня толкает в зад, коня толкает в бок“, „А это так уж от природы боится“, „На улицу выскочил да бежать“, „Все был не женатый, а теперь вдруг женатый“, „Читали немножко, а теперь у бюро, должно, завещанием занялись“¹.

Պիսեմսկու, Կոլլովի, Օստրովսկու, Գոգոլի, Տոլստոյի և այլ հյուսիս հեղինակների երկերից հանված այս նախադասություններից և ոչ մեկի ենթական (դեմքով, սեռով կամ թվով) չի կարող սրոշել և ոչ մի քերական առանց համապատասխան կոնտեքստի, թեև այստեղ կան ամենարազմադան ենթականեր. և՛ она (телега), она (Катерина), և՛ они, և՛ он, և՛ նույնիսկ я.

Հիշում են՝ կոնտեքստի արհամարհումը և ենթակայի զեղջման անտեսումը թյուրիմացության մեջ դրոշմների տանը լեզվական բանավեճերից մեկի ժամանակ մի քանի հոգու, որոնք Հովհաննես Թումանյանի «Անուշի» մի հատվածի քերականական ու իմացարանական սխալ մեկնությամբ Թումանյանին մեղադրում էին հոգակուլության, «վանեցիության» մեջ:

Օխտն աղբյուրից ջուր է առել
Կույս սափորով լուռ ու մունջ,
Օխտը ծաղիկից ծաղիկ քաղել,
Կապել սիրո ծաղիկեփունջ,

քառատողի մեջ ոմանք իրենց էթետիկական ճաշակին համապատասխան ցանկանում էին կույս բառը դիտել իրրե ենթակա, իրրե թե կույսն է յոթ աղբյուրից ջուր առել ու ծաղիկ քաղել, և գտնում էին, որ Թումանյանը չափի համար կատարել է հոգի դործածության կանոնի խախտում՝ դործածելով կույս և ոչ թե կույսը ձևը. նրանք գտնում էին, որ պետք է լիներ «օխտն աղբյուրից ջուր է առել կույսը սափորով լուռ ու մունջ» ևլն, մինչ-

¹ Բոլոր օրինակները առնված են աղագ. Շախմատովի «Синтаксис русского языка» գրքից:

դեռ միանգամայն պարզ է, որ ոչ թե կույսն է ջուր առել, այլ
կույս սափորով է ջուր առել: Բայց ո՞վ. անշուշտ՝ նա: Իսկ թե
ո՞վ է այդ նա-ն, պարզվում է կոնտեքստից, նախորդ քառյակից.

Նկեք, քույրեր, սեզ սարերի

Զքնադադեղ ողիներ,

Նկեք, ջահել սիրահարի

Սերը ողբանք վաղամեռ:

Ահա, հենց այդ ջահել սիրահարն է մեր քննած քառյակի են-
թական:

Այստեղից բխում է, որ նույնիսկ ենթակայի դեմքի ար-
տահայտությունը ստորոգյալի մեջ բնավ էլ մեղ չի տալիս են-
թակայի լիարժեք դրսևորում առանց կոնտեքստի հաշվառման:
Սակայն հաճախ նույնիսկ դերանուն ենթակայի առկայությունը
չի լուծում իմացաբանական ենթակայի խնդիրը. օրինակ՝

«Ո՞վ իս դուն, ի՞նչ իս դուն. ի՞նչ մարթահետարումս իս
դուն» (այստեղ Պեպոն է իր մենախոսության մեջ ինքն իրեն
դու անվանում):

Վերցնենք մի ուրիշ օրինակ.

«Նա հենց բախում վայր ընկավ ձիուց և թևը կոտրեց»:
Թվում է, թե այստեղ ենթական լրիվ արտահայտված է. բայց
այդ միայն թվում է, քանի որ մենք կարծում ենք, թե հայտնի
է նրա՝ նա-ի ով լինելը: Բայց վերցնենք այսպիսի կապակցու-
թյան մեջ. «Նիստից հետո Սուրենն ու Արամը դնալու էին
դյուղ: Նա հենց բախում վայր ընկավ ձիուց և թևը կոտրեց»:
Այստեղից արդեն երևում է, որ «Նա հենց բախում վայր ընկավ
և թևը կոտրեց» նախադասության ենթական բնավ էլ պարզ չէ,
լիարժեք արտահայտված չէ, թեև եզակի Յ-ը դեմքի իմաստը
ձևականորեն առկա է, ոչ միայն բայի, այլև՝ ենթակա դերան-
վան մեջ:

Այսպիսով ուրեմն, ենթական ոչ թե դեմքի ու թվի դադա-
փարն է, որ արտահայտվում է բայի կամ դերանվան դեմքով
ու թվով, այլ այն առարկան, անձը, որ կա նախադասության
մտքի մեջ, հուշվում է բայով կամ դերանվամբ:

Նրբորդ հանգամանքն այն է, որ այսպիսի դեպքերում ան-
տեսվում է կոնտեքստի, կապակցության և մանավանդ իրադրու-
թյան վճռական նշանակությունը, անտեսվում է այն, որ նախա-
դասությունը ոչ թե անկախ, ինքնաբերական է, այլ կեն-

դանի խոսքի, ասության հարարերական միավոր և լիարժեք է միայն այդ հարարերության հաշվառմամբ քննարկվելու դեպքում: Գիտական շարահյուսության տարրերությունը մինչայժմյան քերականական սխառնմաներից է միջի այլոց նաև այն է, որ, ինչպես արդեն ասել ենք, նախադասության հասկացողության ելակետ համարում է խոսքը. խոսքի մեջ է դիտում նշմիայն առանձին բառերի, այլև՝ նախադասությունների լիարժեք դրսևորումն ու իմաստավորումը. խոսքի մեջ է, որ կարող է դուռն ես նշանակել, ես-ը դու նշանակել. միայն խոսքի մեջ կարելի է իմանալ, թե ով է «Օխտն աղբյուրից ջուր առնողը», ով է «Բնչ մարթ ու Բնչ մարթահասարում», ով «վայր ընկավ ձիուց ու թևը կոտրեց»:

Ի դեպ, դառնանք այս վերջինին. վերը մենք բերեցինք նախ հետևյալ նախադասությունը. «Նա վայր ընկավ ձիուց և թևը կոտրեց», որը ձևական քերականության համար լրիվ արտահայտված ենթակայով նախադասություն է: Այնուհետև մեջ բերեցինք այդ նույն նախադասությունը իրեն նախորդող նախադասության հետ՝ Նիստից հետո Սուրենն ու Արամը գնալու էին շրջկենտրոն: Նա վայր ընկավ ձիուց և թևը կոտրեց»: Մենք տեսանք, որ այսպիսով ենթակայի ով լինելը իսպառ մթադնվեց: Ի՞նչ էր սրա պատճառը. իհարկե այն էր, որ այս դեպքում չենք կարողանում, անկարելի է դառնում որոշել, թե Սուրեն և Արամ առարկաներից որի՞ն պիտի վերադրենք նա դերանունը և վայր ընկավ ստորոգյալը: Բայց առնենք դրան նախորդող մի քանի նախադասություն ևս: «Պետրոսը պատմեց, թե ինչպես Լևոնը պատուհաս բերեց իր գլուխը՝ ձի նստելով: Ամառվա արձակուրդի ժամանակն էր. կոլխոզի վարչությունը հավաքվել էր Նիստի: Լևոնը բախում նկատեց երկու թամբած ձի. դրանք Լևոնի եղբայրների ձիերն էին. նա հեծավ ձիերից մեկին՝ շտապելով մի քիչ զրոսնել, քանի նիստը չէր ավարտվել: Նիստից հետո Սուրենը և Արամը գնալու էին շրջկենտրոն: Նա հենց բախում վայր ընկավ ձիուց և թևը կոտրեց»: Այժմ տեսնում ենք, որ խոսքի մեջ ենթական պարզ կերպով ու լիարժեք դրսևորված է, նա հասկացվում է նախադասությունների դիալեկտիկական շղթայի միջոցով, անկախ տվյալ առանձին նախադասության մեջ նրա արտահայտված լինելուց կամ չլինելուց հանձին դերանվան կամ բայի դեմքի:

Գրա
3319



Պետք է նկատենք, որ ենթակայի արտահայտության այսպիսի պարզարանումը դեռևս սպառնիչ կերպով չի լուծում գիտական շարահյուսության խնդիրը այս դեպքում. այս ձևով վերջ է դրվում նախադասության ենթակայի ճանաչման թաղարծակ ձևական մոտեցմանը միայն՝ իհարկե պահանջելով, որ աշակերտը ենթական հանի ոչ թե բայի դեմքից կամ դերանունից, այլ նախադասությունների գիտելիտիկական շղթայից, կենդանի խոսքից. այստեղ արդեն կա գիտելիտիկա, բայց դեռևս չկա մարքսլենինյան իմացարանությունը, մատերիալիստական գիտելիտիկան: Մեր նոր շարահյուսությունը հասնում է նաև դրան, շնորհիվ քերականական ենթակայի և նյութական սուբեկտի՝ կատարողի փոխհարաբերության հարցի արմատական լուծման: Խընդիրն այն է, որ ենթական ոչ միշտ է համընկնում քերականական ձևավորման սովորական պատկերացմանը: «Սուբեկտը,—ասում է ալ. Մեշչանինովը,—կարող է ընկալվել որպես գործող անձ, որպես մի անձ, որը իր վրա կրում է գործողության արդյունքը (համեմատիր ենթական կրավորական սեռի բայերի դեպքում), որպես մի անձ, որին պատկանում է կատարվող գործողությունը (համեմատիր նախադասության ստացական կառուցվածքները), որը կրում է ուժեղ գրգիռի դրությունը և այլն»¹ Այս նոր է և լավ է, սակայն դեռ քիչ է. նշված դեպքերի մեջ տակավին դիտվում են սուբեկտ-ենթակայի միայն քերականական տարրեր դրսևորումները (օրինակ ուղղական հոլովով արտահայտված գործող ենթակա, սեռական հոլովով արտահայտված, տրական հոլովով արտահայտված գործող ենթակա ևլն, ասենք՝ Սուբեներ եկավ, Սուբենը պարտվեց, Սուբենին դուր է գալիս, Сурену холодно, իմ տեսեալ է, Սուբենայ գործեալ է ևլն): Այստեղ ունենք դեռևս Յենթակայի ու ստորոգյալի՝ նախադասության կառուցվածքի ձևական տարրերություններ, ենթակայի հոլովական արտահայտության տարրեր ձևավորումներ: Սակայն իմացարանական շարահյուսությունը չի բավարարվում ենթակայի տարրեր հոլովական արտահայտությունների տակ նույն ենթակա հասկացությունը դրսևորելով, այլև առաջ է գնում՝ բացահայտելով բնության ճյուղական, իրական ենթակայի

¹ Акад. И. И. Мещанинов—Новое учение о языке на современном этапе развития, стр. 22.

և քերականական ենթակայի հնարավոր հակասությունները: Եւ-
 նելով մարքսիզմի հիմնական այն մտքից, թե «նշ լեզուն և նշ
 էլ միաքը ինքնին չեն հանդիսանում առանձին թաղավորու-
 թյուն. նրանք միայն դրսևորումն են իսկական կյանքի»՝ գի-
 տական շարահյուսությունը անհրաժեշտ է համարում տարբե-
 րել իսկական կյանքի ենթական՝ սուբեկտը մտքի և լեզվի են-
 թականից՝ քերականական ենթակայից, որին նա կարող է և՛
 համընկնել, և՛ չհամընկնել, ըստ որում նշ միայն տարբեր կամ
 նույնիսկ տարբեր սիստեմի լեզուների, այլև՝ միևնույն սիս-
 տեմի և նույնիսկ միևնույն լեզվի մեջ: Իսկական կյանքի են-
 թական, դործող, եղող անձը, իբրև՝ սուբեկտը կարող է դրսև-
 ւորվել քերականության, նախադասության մեջ և՛ իբրև ենթա-
 կա (Սուրենը եկավ, Սուրենը հավանեց), և իբրև խնդիր Սուրենից
 դաս ստացա, Սուրենի կողմից կանխվեց աղետը, Սուրենին դուր
 եկավ գիրքը և այլն). ըստ որում, նույն հեշտությամբ կարող է և
 իսկական կյանքի օբեկտը՝ սուբեկտի գործողության առարկան, քե-
 րականության մեջ դրսևորվել նշ միայն իբրև խնդիր, այլև ենթա-
 կա: Իսկական գիտական քերականության խնդիրն այն է, որ նա-
 խադասության քերականական ենթական պարզելու հետ մեկ-
 տեղ պարզի և իրական ենթական, կյանքի, օբեկտիվ իրականու-
 թյան ենթական՝ սուբեկտը: «Երբ գիրքը դուր եկավ Սուրենին»
 նախադասության մեջ պարզում ենք, որ գիրքը քերականական
 ենթակա է ուղղական հոլովով, իսկ «Սուրենին» քերականական՝
 խնդիր՝ տրական հոլովով, կամ երբ «բերքը հավաքվեց կոլխոզ-
 նիկներին կողմից» նախադասության մեջ պարզում ենք, որ բեր-
 քը քերականական ենթակա է ուղղական հոլովով, «կոլխոզնիկ-
 ներին կողմից»՝ անջատման խնդիր, կողմից կապով կամ բացա-
 ռական հոլովով, մենք լուծում ենք խնդրի մեկ կողմը միայն,
 որովհետև չենք պարզում, թե իսկական կյանքի ինչն է արտա-
 ցված այս նախադասությունների մեջ: Գիտական քերականու-
 թյունը իր վերալուծումները հասցնում է մինչև իսկական կյան-
 քի արտահայտության բացահայտումը քերականական իրողու-
 թյունների մեջ և հայտարարում է, որ վերահիշյալ նախադասու-
 թյունների ենթակաները «Գիրքը» և «բերքը» իսկական կյանքի
 մեջ օբեկտ են, թեև նախադասության մեջ ներկայացված են
 իբրև սուբեկտ, ենթակա, իսկ Սուրենը (Սուրենին) և կոլխոզ-
 նիկները (կոլխոզնիկների կողմից) իսկական կյանքի մեջ սու-

բեկտ են, թեև նախադասության մեջ համեատորեն ներկայաց-
վել են իբրև օրեկտ՝ խնդիր:

Լեզուների մեջ հնարավոր է իսկական կյանքի արտացոլ-
ման ամենարազմազան ձևավորում և դրսևորում. միևնույն
օրեկտիվ իրականությունը աշխարհի տարբեր լեզուների մեջ
ունենում է ամենատարբեր արտացոլում. դիտական քերական-
ության խնդիրը այն է, որ նախ՝ ի տարբերություն ռացիո-
նալիստների, բացահայտի, որ միևնույն օրեկտիվ իրականու-
թյունը մարդկային մտածողության մեջ ունենում է հաճախ
տարբեր և նույնիսկ հակասական լեզվական դրսևորում ու ար-
տահայտություն և ոչ թե աշխատի համահարթել լեզուների
տարբերությունները՝ սահմանելով բոլոր լեզուների համար մի-
ասնական ռացիոնալիստական քերականություն, յուրատեսակ
Պրոկրուստեսի մահիճ: Այդ կլիներ մի տեսակ իմաստաբանա-
ֆորմալիզմ, որով ձևը կնույնացվեր բովանդակությանը:

Գիտական քերականության խնդիրը այն է, որ երկրորդ՝
ի տարբերություն բոլոր մինչաշխարհային քերականությունների, դի-
տելով և ուսուցանելով լեզվական տարբեր ու բազմազան ձևերը
իրենց քերականական յուրահատուկ բովանդակությամբ՝ բա-
ցահայտի ու դիտել տա լեզվի ու մտածողության մեջ դրը-
սելովորված իսկական կյանքի իրողությունները՝ և ոչ թե համա-
հարթի տարբեր ձևերի հակասությունը իրենց բովանդակու-
թյանը, ոչ թե բովանդակությունը նույնացնի ձևին, ասենք, —
իրական ենթական՝ սուբեկտը՝ նույնացնի քերականական սու-
բեկտին՝ ենթակային: Այսպիսով, մեկ ընդմիջտ կլուծվի ոչ
միայն ձևի ու բովանդակության դիալեկտիկական հակադրամի-
ասնության հարցը լեզվի մեջ, ոչ միայն նոր և խոր իմաստ
կատանան լեզվական ձևերը, և իբր ձևավորման, դրսևորման ողջ
հարստությամբ կդիտվի բովանդակությունը, այլև՝ քերակա-
նությունը չոր ու ցամաք, ձևական, մետաֆիզիկ գիտությու-
նից կվերածվի կենդանի, հետաքրքրական, իմաստավոր գիտու-
թյան, լեզվի ձևերի ուսմունքից վերափոխվելով լեզվի դիալեկտի-
կայի ուսմունքի:

Քերականական ձևերի, քերականական իմաստների և իրա-
կան, իմացաբանական իմաստների հակադրամիասնության մեր
մեկնաբանությամբ, որ հենված է մարքս-լենինյան իմացաբա-
նության վրա, ապահովվում է ոչ միայն լեզվի ձևերի ու կա-
պակցությունների, լեզվական իրողությունների առավել ճիշտ

ու բաղձակողմանի ճանաչումը, այլև՝ քերականական վերլուծումների միջոցով մարքսիստական դիալեկտիկայի տարրերի օրգանական ուսուցումն ու պատվաստումը աշակերտներին:

Գիտական քերականությունը, երբ այն ամբողջանա, ճշգրտվի ու ձևավորվի, իսկ մենք հենց ձգտում ենք դրան, կդառնա մարդկային լեզվի, կենդանի խոսքի դիալեկտիկայի ուսմունքը:

Гурген Севак

Некоторые вопросы синтаксиса в свете марксистско-ленинской гносеологии

Р е з ю м е

Исходя из понимания языка, как средства общения и одновременно как орудия мышления, автор статьи ставит перед собой задачу проследить „языковое отображение“ действительности, в частности—акт предикации.

Цепь языкового мышления человека, обусловленная его объективным бытием, состоит из взаимообуславливающих звеньев—мыслей, выражающихся в виде предложений. „Предложение—это простейшее, миллиарды раз повторяющееся отношение человека к объективной действительности, его языковой—мыслительной деятельности“. Проследив диалектику предложения, автор останавливается на подлежащем и сказуемом, как на полюсах предложения, отображающих, в основном, материю и ее движение.

В отличие от логической, психологической, формальной и других теорий грамматики, бытующих до сих пор, автор рассматривает акт предикации, как акт трехсложный, триединый, включающий в себе не только а) отчуждение признака от предмета; б) приписывание признака предмету, но и в) противопоставление признака предмету.

Дальше автор рассматривает вопрос о формальном выражении субъекта в сказуемом (лицо, род, число) и приходит к выводу, что „выражение лица подлежащего в сказуемом—это еще не выражение подлежащего: это касается не только третьего, но и первого и второго ли-

ца". Признание некоторыми учеными полноты выражения субъекта в 1-ом и во 2-ом лицах сказуемого и отрицание такой полноты в 3-м лице автор считает результатом формального подхода к вопросу. Полнота подлежащего достигается лишь тогда, когда в контексте ясно, что такое это подлежащее, будь оно выражено местоимением I, II или III лица, или глаголом соответствующего лица, или даже не выраженным в сказуемом.

Далее автор переходит к рассмотрению вопроса о подлежащем и субъекте, об их схождениях и расхождениях. Приводя примеры соответствий между субъектом действительности и подлежащим в предложении и их расхождений, автор заключает, что научная советская грамматика должна; „во-первых, в отличие от рациональной грамматики, вскрывать разнообразие отображения действительности в человеческом языке, избегая Прокрустова ложа для всех языков“, и „во-вторых, она должна, в отличие от всех до сих пор существующих грамматических направлений, наблюдая и обучая разнообразные языковые формы с их особенным грамматическим содержанием, вскрывать в них единую объективную реальность, их реальное содержание, избегая отождествления содержания с формой, скажем, действительного субъекта с подлежащим“.

Советская научная грамматика, основанная на марксистско-ленинской теории познания, обеспечивает не только наиболее верное и всестороннее познание языковых форм и связей, языковых фактов и явлений, но и одновременно обеспечивает обучение и усвоение элементов марксистской диалектики в школе, на уроках родного языка. Советская научная грамматика должна стать учением о диалектике человеческого языка, живой речи.



(204)

$\frac{4m4}{3319}$
